

Արձանագրություն թիվ 9

Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետի
խորհրդի նիստի, կայացած 2017թ. հուլիսի 03-ին

Օրակարգ՝

1. Պետական քննությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում:
2. Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2016-17 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:
3. «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցոլոգիական հարցումների արդյունքների քննարկում:
4. Ուսումնական ծանրաբեռնվածությունների հաստատում:
5. Ընթացիկ հարցեր:

1.Խորհրդի նախագահ Տ.Վ. Ղուկասյան.

-Ներկայացնեմ այսօր մեր նիստում քննարկվող հարցերը:

Օրակարգի 1-ին հարցը քննությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկումն է:
-Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Հարությունյանը նշեց, որ իրենց ամբիոնում կատարվել է 17 ավարտական աշխատանք “Քիմիա” և “Դեղագործական քիմիա” բաժիններից (հեռական ուսուցմամբ): Արդյունքները միջինից բարձր է: Քիմիա բաժնից մագիստրոսական թեզեր չենք ունեցել:

-Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ Շ.Ա.Մարգարյանը նշեց, որ ամբիոնը ունեցել է 6 ավարտական աշխատանք քիմիա բաժնի IV-կուրսից, 10 ավարտական աշխատանք “Դեղագործական քիմիա” բաժնից (հեռական ուսուցմամբ) և 3 1-ին կուրսի մագիստրոս ֆարմացիա բաժնից: Աշխատանքները կատարվել են բարձր մակարդակով, որի վառ արդյունքն է ուսանողների բարձր գնահատականները:

-Օրգանական քիմիայի ամբիոնում կատարվել է 6 ավարտական աշխատանք “Քիմիա” բաժնից, 11 ավարտական աշխատանք “դեղագործական քիմիա” բաժնից (հեռակա ուսուցմամբ), “Դեղագիտություն բաժնից” 1 մագիստրոս և 5 մագիստրոս “Ֆարմացիա” բաժնից: Ամբիոնում իրականացված ավարտական աշխատանքները արժանացել են բարձր և գերազանց գնահատականների:

Նիստի նախագահ Տ.Վ. Ղոչիկյան

-Ես “Ֆարմացիայի” ինստիտուտում կայացած պաշտպանությունների վերաբերյալ մի քանի բացասական երևույթներ եմ նկատել, որոնք ազդում են հենց ուսանողի շահերին և պետք է այդ հարցին է դրական լուծում տալ:

1. Հանձնաժողովի կազմում պետք է ընդգրկվեն մասնագետներ բոլոր ոլորտներից: Նման կազմը հնարավորություն կտա ռեալ գնահատել ուսանողի աշխատանքը, նրա մասնակցության տոկոսը մագիստրոսական աշխատանքի կատարմանը:

2. Եվս մի քանի ոչ հաճելի երևույթներ, որը ֆիքսել եմ, վերաբերվում է նախնական պաշտպանությանն: Ինչպես գիտեք մագիստրոսների նախնական պաշտպանությունները իրականացվել են “Ֆարմացիայի” ինստիտուտում, նախապես կազմած ցուցակներով, ըստ օրերի: Ուսանողին ընդհատել և ելույթը դադարեցնել միայն այն պատճառով, որ այլ ամբիոնում է կատարել աշխատանքը այնքան էլ կորեկտ չէր:

Ուսանողից պահանջել բոլոր նյութերի ՄՄՌ տվյալները սլայդով, եթե խնդրահարույց հարց չկա համարում եմ, ոչ նորմալ, չէ որ թեզի մեջ արդեն ՄՄՌ տվյալների մեկնաբանությունը յուրաքանչյուր նյութի համար բերված է փորձնական մասում:

Նման վերաբերմունքը ուսանողի նկատմամբ բերում է ոչ միայն հոգեբանական ճնշման, այլև՝ բացասական արձագանք ապագա ուսանողների մոտ: Այս հարցերին պետք է ուշադիր լինել, կանխել նմանատիպ երևույթները մայր ԲՈՒՀ-ում: Դա մեզ հարիր չէ:

Տ.Վ.Ղոչիկյան – Ես գտնում եմ, որ մագիստրատուրան 1 տարով դարձնել ամենասխալ քայլերից մեկն է, քանի որ ուսանողը I- կիսամյակում բացարձակ ժամանակ չունի լաբորատորիա մտնելու: Ամբողջ ծանրաբեռնվածությունը թողնել II- կիսամյակում, մի շարք քննությունների հետ այնքան էլ ճիշտ չէ:

2. Խորհրդի նախագահ Տ.Վ. Ղոչիկյան.

-Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2016-17 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:

Ելույթ ունեցավ – Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ Ռ.Ս.Հարությունյանը: Նա ներկայացրեց 2016-2017 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը: Հաշվետվությունը կցվում է:

Ելույթից հետո հարցեր տվեցին՝

1.- Դուք նշում եք որ ամբիոնի պրոֆսոր Հ.Գ.Խաչատրյանի, դոցենտ Ռ.Պ.Մխիթարյանի և Ռ.Ադամյանի արժեքավոր ներդրումները ամբիոնի գիտական գործում

-Հ.Խաչատրյանը այս ուսումնական տարում կազմակերպել էր “Золь-Гель-2016” 4-րդ միջազգային կոնֆերանսը ԱՊՀ երկրների համար: Կոնֆերանսը կայացել է 2016թ-ի սեպտեմբերի 19-23-ը Երևանում: Կոնֆերանսի կազմակերպչական գործում մեծ մասնակցություն են ունեցել քիմիայի ֆակուլտետի ուսանողները, դա նրանց հնարավորություն է տվել ծանոթանալ քիմիայի զարգացման նոր փուլերին և հանդիպել մի քանի հայտնի քիմիկոսների հետ: Պրոֆեսոր Խաչատրյանը Մենդելեևյան օլիմպիադայի, ինչպես նաև մի քանի դպրոցական օլիմպիադաների կազմակերպիչներից է:

- Դոցենտ Ադամյանը մեծ ներդրում ունի “ Ամառային դպրոցի ” կազմակերպման հարցում: Այս տարի առաջին անգամ ամռային դպրոցը կունենա քիմիա բաժին: Այն կազմված է ինչպես տեսական այնպես էլ փորձնական մասերից: Պետք է նշեմ որ այս հարցում կա նաև մյուս ամբիոնների ներդրումները: Բացի այն Ռ.Ադամյանը և օրգանական քիմիայի ամբիոնից Ա.Գալստյանը միասին իրականացնում են ևս մեկ ծրագիր դպրոցականների համար՝ փորձեր հիմնական և ավագ դպրոցի աշակերտների համար:

-Դոցենտ Մխիթարյանը այս տարի ուսանողների արտադրական պրակտիկան անցկացրել է “ Արարատ ” գործարանում, որը ոչ միայն ապահովել է ուսանողների պրակտիկան, այլև սնունդով:

3. Խորհրդի նախագահ Տ.Վ.Ղոչիկյան

«Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցումների արդյունքների քննարկումը 2016-2017 ուս. տարվա II-կիսամյակի արդյունքները դեռ չենք ստացել հետևաբար այդ հարցը կքննարկենք ավելի ուշ:

4. Խորհրդի նախագահ Տ.Վ.Ղոչիկյան

Օրակարգի հաջորդ հարցը ուսումնական ծանրաբեռնվածությունների հաստատումն է: Այս հարցը նույնպես չի քննարկվելու, քանի որ ծանրաբեռնվածությունները հաստատված չեն, այն կքննարկենք անմիջապես արձակուրդից հետո, որպեսզի ամբողջական պատկերը պարզ լինի:

Խորհրդի նախագահ՝

Ք.գ.դ, պրոֆեսոր

Գիտ. քարտուղար՝

Ք.գ.թ., ասիստենտ

Տ.Վ. Ղոչիկյան

Մ.Ա.Սամվելյան